

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՆԱԽԱԴԵՊԸ
ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կա նախկին դատական որոշումներին հղումներ անելու և դրանց հետևելու հստակ միտում: Օրինակ՝ «Readaptation of the Mavrommatis Jerusalem Concessions» գործով որոշման մեջ Ազգերի լիգայի Միջազգային արդարադատության մշտական պալատը նշել է, որ դատարանը որևէ պատճառ չունի շեղվելու որոշման այն կառուցվածքից, որը պարզորեն բխում էր նախկին որոշումներից, որոնց հիմնավորումները դատարանը դեռևս համարում էր որպես ճիշտ²: Մեկ այլ դեպքում դատարանը հղում կատարեց ավելի վաղ գործով իր կողմից տրված խորհրդատվական կարծիքին³:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը (ներառյալ՝ Միջազգային արդարադատության մշտական պալատը) ստեղծվել է որոշակի կոնկրետ նպատակներով, որոնք սահմանված են դատարանի ստատուտում: Դատարանը տարիների ընթացքում «սկսել է իրականացնել այնպիսի առաջադրանքներ, որոնք ամբողջությամբ չեն համընկնում այն առաջադրանքների հետ, որոնք հեղինակների մտքում էին դատարանի ստեղծման ժամանակ»⁴: Դատարանի գործունեության նոր ուղղությունը դարձավ միջազգային իրավունքի զարգացումը: Ավելին՝ որոշ տեսաբաններ ՄԱԿ-ի միջազգային դատարանը դիտարկում են

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Վ. Քոչարյան:

² St. u Readaptation of the Mavrommatis Jerusalem Concessions, Jurisdiction, 1927 PCIJ Reports Series A, No. 11, 18 (http://www.worldcourts.com/pcij/eng/decisions/1927.10.10_mavrommatis.htm), Precedent in the World Court, Hersch Lauterpacht Memorial Lectures, Mohamed Shahabuddeen, Cambridge University Press, New York, 1996, էջ 16-29:

³ St. u Exchange of Greek and Turkish Populations, (1925) PCIJ Ser B, no. 10, էջ 21, Ian Brownlie, Principles of Public International Law, Oxford, (5th ed. 1998), էջ 20:

⁴ St. u Sir Hersch Lauterpacht, The Development of International Law by the International Court, London 1958, էջ 5 (Սոցիոլոգիայում այս երևույթը կոչվում է նպատակների հետերոգենություն):

որպես միջազգային հարաբերություններում իրավունքի գերակայության սկզբունքի իրագործումն ապահովող մարմին⁵:

Ա. Մմբատյանը գտնում է, որ «հաշվի առնելով այն փաստը, որ միջազգային դատարանակազմության ընթացակարգերը էականորեն տարբերվում են ազգային դատարանների և արբիտրաժների (ներառյալ՝ առևտրային արբիտրաժները) ընթացակարգերից, միջազգային արդարադատության մարմինների գործունեության ուսումնասիրությունը անհրաժեշտ է և ակտուալ հատկապես այն մասով, որը վերաբերում է միջազգային իրավունքի համակարգում միջազգային արդարադատության այդ մարմինների որոշումների կարգավիճակին և դրանց կողմից իրավունքի զարգացման վրա ներգործությանը»⁶:

Նմանատիպ կարծիք է հայտնել նաև միջազգային իրավունքի տեսաբան Ռ. Քալամարյանը, որը կարևորում է ՄԱԿ-ի միջազգային դատարանի դերակատարությունը միջազգային իրավունքի զարգացման գործում: Այսպես՝ նրա կարծիքով. «Իրեն հանձնված վեճերը լուծելու առաքելության ընթացքում ՄԱԿ-ի միջազգային դատարանը նպաստում է միջազգային իրավունքի առաջընթաց զարգացմանը: Միջազգային իրավունքի առաջընթաց զարգացման հասկացվում է պետությունների իրավաբանորեն պարտադիր վարքագծի նոր կանոնների մշակումը այն ոլորտներում, որոնք մինչ այդ կարգավորված չեն իրավունքով, ինչպես նաև այն ոլորտներում, որտեղ իրավունքը բավարար չափով արտահայտված կամ զարգացած չէ»⁷:

«Դատական որոշումները դարձել են ամենակարևոր գործոն միջազգային իրավունքի զարգացման համար, և դատական որոշումների հեղինակությունն ու համոզիչ ուժը երբեմն այդ որոշումների հաղորդում է ավելի մեծ կարևորություն, քան դրանք ունեն ձևական իրավունքի տեսանկյունից»⁸:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի առաջնային դերը պետությունների միջև առաջացած վեճերի լուծումն է միջազգային իրավունքի կի-

⁵ Տե՛ս **Каламкарян Р. А.**, Место и роль Международного суда в современном миропорядке, Журнал Российской академии наук, «Государство и право», Москва, сентябрь 2011, էջ 80:

⁶ Տե՛ս **Смбатян А. С.**, Решения органов международного правосудия в системе международного публичного права, Москва, 2012, էջ 9:

⁷ Տե՛ս **Каламкарян Р. А.**, Международный суд как орган международного правосудия, Журнал Российской академии наук, «Государство и право», Москва, октябрь 2011, էջ 43:

⁸ Տե՛ս **u Oppenheim's International Law**, 9th edition, Longman (1992), I, para. 13, էջ 41:

րառման միջոցով, սակայն ՄԱԿ-ի միջազգային դատարանն ունի նաև մեկ այլ կարևոր դերակատարություն, այն է՝ պարզաբանել, զարգացնել և «բարելավել» իրավունքն այնպես, որը կազդի ՄԱԿ-ի միջազգային դատարանին ներկայացված գործից այն կողմ⁹: ՄԱԿ-ի միջազգային դատարանի այսպիսի դերը, որպես այդպիսին, նախատեսված չէ դատարանի ստատուտով, չնայած գոյություն ունեցող օբյեկտիվ միջազգային իրավունքից դուրս դատական որոշման կայացման որոշակի տարր նախատեսված է դատարանի ստատուտում՝ 38-րդ հոդվածի 2-րդ մասում¹⁰. «Այս դրույթը չի սահմանափակում դատարանի իրավունքը գործը լուծել «ex aequo et bono», եթե կողմերը դրան համաձայն են»: Նույն կերպ Սան Ֆրանցիսկոյի IV կոնֆերանսում որոշ քննարկումներ առաջարկում էին, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտը նախագծելիս միջազգային վեճերի լուծումից բացի նաև այլ դերակատարության մտադրություն է եղել ստատուտը նախագծողներից առնվազն մի քանիսի մոտ¹¹: Այնուամենայնիվ ՄԱԿ-ի միջազգային դատարանի այս դերակատարությունը չափազանց կարևոր է, չնայած որ դա ուղղակիորեն նախատեսված չի եղել դատարանի ստատուտով:

«Միջազգային դատարանը դարձել է միջազգային իրավունքի զարգացման հզոր գործիք»¹²:

«Միջազգային դատարանի որոշումների նշանակությունը չի սահմանափակվում առանձին դատական որոշումներով: Միջազգա-

⁹ Sū RP Anand, *Studies in International Adjudication* (Dehli, Vikas, 1969) էջ 167-180. LV Prot, *The Latent Power of Culture and the International Judge* (Abingdon, Professional Books, 1979), էջ 86-109. Terris, Romano and Swigart (n 32) էջ 115. J. Fernando, 'The International Court of Justice: A Critique of its Role' (1992) 4 Sri Lanka Journal of International Law էջ 27, 52. M Lachs, 'Some Reflections on the Contribution of the International Court of Justice to the Development of International Law' (1983) էջ 10. Syracuse Journal of International Law and Commerce էջ 239, 245. HN Neyer, *The World Court in Action: Judging among the Nations* (Oxford, Rowman and Littlefield, 2002) էջ 67-68 և B Chipp, *Going to Court Not War*, 7th edn (London, Institute for Law and Peace, 2002), էջ 10:

¹⁰ James Green, *The ICJ and Self-Defense in International Law*, Oxford and Portland, Oregon, 2009, էջ 205-210:

¹¹ Sū Statement of C Parra-Perez (President of Commission IV at San Francisco), *Documents of the United Nations Conference on International Organisation*, Volume XIII: Commission IV, Judicial Organisation, Doc 430 IU/, էջ 5, 31:

¹² Sū u Rosenne Sh. *The Law and Practice of the International Court. L.*, 1956. Vol. II, էջ 607:

յին դատարանների և հատկապես ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների կարևորությունը կայանում է նաև նրանում, որ դրանք մեծապես նպաստում են միջազգային իրավունքի ճանաչմանն ու զարգացմանը»¹³:

Այն գաղափարը, որ Համաշխարհային դատարանը պետք է մեծ դերակատարություն ունենա միջազգային իրավունքի զարգացման գործում, նոր չէ: ՄԱԿ-ի միջազգային դատարանի իրավանախորդը՝ Միջազգային արդարադատության մշտական պալատը, միանշանակ, մեծ դերակատարություն ունեցավ միջազգային իրավունքի զարգացման գործում երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում¹⁴: Այս ավանդույթը շարունակվում է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի մոտ. «Միջազգային դատարանի դերը պետությունների միջև միջազգային վեճերի լուծումն է և իրավասու մարմիններին իրավաբանական խորհրդատվություն մատուցելն է: Դատարանի դերը միջազգային իրավունքը զարգացնելը չէ վերացական իմաստով, բայց, իհարկե, հենց յուրահատուկ միջազգային վեճերի լուծումը և հատուկ խորհրդատվության տրամադրումը արդեն իսկ զարգացնում են միջազգային իրավունքը»¹⁵:

Այդ պատճառով շատ կարևոր է, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը չլիտվի որպես միջազգային օրենսդիր: Ինչպես ՄԱԿ-ի միջազգային դատարանը մի քանի անգամ ինքն է մատնանշել, «այն օրենսդիր մարմին չէ: Միջազգային դատարանի պարտականությունն է կիրառել միջազգային իրավունքն այն վիճակում, ինչպես այն գտնում է դատարանը, այլ ոչ թե ստեղծել միջազգային իրավունք»¹⁶: Միաժամանակ անվիճելի է, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները հսկայական ազդեցություն ունեն միջազգային իրավունքի զար-

¹³ St. 'u Alfred Verdross, Bruno Simma, *Universelles Völkerrecht*, Berlin 1984. - էջ 396:

¹⁴ St. 'u H. Lauterpacht, *The Development of International Law by the International Court*, revised e (London, Stevens and & Sons, 1958). SM Schwebel, 'Reflections of the Role of the International Court of Justice' (1986) 61 *Washington Law Review*, էջ 1061, 1063:

¹⁵ St. 'u R. Higgins, *Problems and Process: International Law and How We Use It* (Oxford, Oxford University Press, 1994) էջ 202. Kooijmans, 'The ICJ in the 21st Century: Judicial Restraint, Judicial Activism, or Proactive Judicial Policy' (2007) 53 *International and Comparative Law Quarterly*, էջ 741, 742:

¹⁶ St. 'u South West Africa Cases (Ethiopia v South Africa, Liberia v South Africa) second phase 1966) ICJ Reports 4, para 89. *The Legality of the Threat. Nuclear Weapons advisory opinion* (1996) ICJ Reports 226, para 18:

գացման վրա: Այն փաստը, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը շատ հարգված հաստատություն է (Միջազգային դատարանի անդամներին¹⁷ առումով և ամբողջությամբ վերցրած՝ որպես ՄԱԿ-ի գլխավոր մարմիններից մեկը) նշանակում է, որ դատարանի որոշումները, միգուցե անխուսափելիորեն, ազդեցություն ունեն պետական պրակտիկայի և «*opinio juris*»-ի¹⁸ վրա, ինչպես նաև գիտնականների աշխատությունների¹⁹ վրա: Երբ դատական մարմինն ընդունվում է որպես իրավունքի աղբյուրի իշխանագոր ներկայացուցիչ, ապա հավանական է, որ այդ դատական մարմնի որոշումները ևս կդիտվեն որպես իշխանագոր բնույթ ունեցող, նույնիսկ եթե դրանք ձևական-իրավական առումով պարտադիր են միայն գործի կողմերի համար և միայն տվյալ գործով²⁰:

Միջազգային դատարանների դերակատարությունը միջազգային իրավական կարգավորման ոլորտում ունեցել է հսկայական առաջընթացի տարբերություն 1920-ական թթ.: Հերշ Լատթերփախտի կարծիքով՝ ի սկզբանե ՄԱԿ-ի միջազգային դատարանի համար սահմանված գործունեության նպատակը ժամանակի ընթացքում վերաճել է սկզբնական նպատակի հետ այլևս ամբողջությամբ չհամընկնող այլ նպատակի. այդ դատարանն այժմ իրականացնում է նաև այլ առաքելություն՝ միջազգային իրավունքի զարգացումը²¹:

Միջազգային արդարադատության մշտական պալատի և ՄԱԿ-ի միջազգային դատարանի հիմնադրման առաջնային նպատակը եղել

¹⁷ Տե՛ս Merrills (n 25) էջ 148. O. Schachter, *International Law in Theory and Practice* (Dordrecht, Martinus Nijhoff, 1991), էջ 40:

¹⁸ Տե՛ս JJ Paust, 'Domestic Influence of the International Court of Justice' (1997-98) 26 *Denver Journal of International Law and Policy* էջ 787, 788. GG Fitzmaurice, 'Some Problems Regarding the Formal Sources of International Law' in *Symbolae Verzijl* (The Hague, Martinus Nijhoff, 1958) էջ 153, 169. Palmisano (n 33) էջ 208-11. M. Koskenniemi, *The Gentle Civilizer of Nations: The Rise and Fall of International Law 1870-1960* (Cambridge, Cambridge University Press, 2001), էջ 403: *Asylum case (Columbia/Peru) merits (1950) ICJ Reports* 266, dissenting opinion of Judge Azevedo, էջ 332:

¹⁹ Տե՛ս MW Janis, 'The International Court' in MW Janis (ed), *International Courts for Twenty-First Century* (Dordrecht, Martinus Nijhoff, 1992) էջ 19. Schachter, *International Law in Theory and Practice* (n 42), էջ 40-41:

²⁰ Տե՛ս HG Maier, 'Appraisals of the ICJ's Decision: Nicaragua v United States (Merits): Introduction' (1987) 81 *American Journal of International Law* 77. Higgins, *Problems and Process: International Law and How We Use It* (n 39), էջ 202-204:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 5:

է՝ ծառայելու որպես գործիք իրավունքի միջոցով միջազգային հարաբերություններում խաղաղությունը երաշխավորելու համար: ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից քննված մի շարք գործեր, ինչպիսիք են, օրինակ, ազգային փոքրամասնությունների վերաբերյալ գործերը, «Eastern Greenland»²²-ը, Թուրքիայի և Իրաքի, ինչպես նաև Լեհաստանի և Չեխոսլովակիայի միջև սահմանային վեճերի վերաբերյալ տրված խորհրդատվական եզրակացությունները, Նորվեգիայի և Միացյալ Թագավորության միջև «Fisheries»²³ և մի շարք այլ գործեր մեծապես նպաստել են միջազգային իրավահարաբերություններում որոշ կարևորագույն խնդիրների լուծմանը²⁴:

Միջազգային արդարադատության մշտական դատարանի կանոնադրությունը մշակող Իրավաբանների խորհրդատվական հանձնաժողովը գիտակցում էր, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել միջազգային իրավունքի զարգացման ուղղությամբ, որը արտացոլվել է այդ հանձնաժողովի կողմից դատարանի կանոնադրության մշակման նախապատրաստական փաստաթղթերում:

Որոշ տեսաբաններ միջազգային իրավունքի զարգացման վրա ներգործության տեսանկյունից ՄԱԿ-ի միջազգային դատարանի և Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումներից բացի կարևորում են նաև այդ որոշումներին կից հրապարակվող դատավորների հատուկ կարծիքները²⁵: Օրինակ՝ Ա. Սմբատյանը նշում է. «Միջազգային պրակտիկայում, հատկապես ՄԱԿ-ի միջազգային դատարանի և Միջազգային արդարադատության մշտական պալատի պրակտիկայում, կարելի է բերել բազմաթիվ հատուկ կարծիքների օրինակներ, որոնք որոշակի ներգործություն են ունեցել միջազգային իրավունքի զարգացման կամ առնվազն հաջորդող նախադեպային պրակտիկայի ձևավորման վրա... Օրինակ՝ դատավոր Ա-

²² Տե՛ս CASE CONCERNING MARITIME DELIMITATION IN THE AREA BETWEEN GREENLAND AND JAN MAYEN (DENMARK v. NORWAY), Judgment of 14 June 1993, <http://www.icj-cij.org/docket/index.php?sum=401&p1=3&p2=3&case=78&p3=5> կայքում:

²³ Տե՛ս Case: Anglo Norwegian Fisheries Case (UK vs Norway), Year of Decision: 1951. Court: ICJ. <http://ruwanthikagunaratne.wordpress.com/2014/04/11/anglo-norwegian-fisheries-summary/> կայքում:

²⁴ Տե՛ս Sir Hersch Lauterpacht The Development of International Law by the International Court, revised edn (London, Stevens & Sons, 1958), էջ 3:

²⁵ Տե՛ս **Смбатян А. С.**, Решения органов международного правосудия в системе международного публичного права, Москва 2012, էջ 101-102:

մոտնի հատուկ կարծիքը Նամիբիայի վերաբերյալ գործում, որը վերաբերում էր Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի կարգավիճակին, հատկապես ռասայական խտրականությանը վերաբերող մասում²⁶, և դատավոր Վիրամանտրիի կարծիքը զարգացման իրավունքի վերաբերյալ «Գաբչիկովո-Նաջիմարոշ» գործում»²⁷:

Դեռևս Միջազգային արդարադատության մշտական պալատի ստատուտի մշակման ժամանակ բարոն Դեսկամպի կողմից առաջարկված ստատուտի 35-րդ (ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդված) հոդվածի խմբագրությունը անդրադառնում էր միջազգային դատական որոշումների և միջազգային իրավունքի զարգացման կապին: Նշված խմբագրությունը սահմանում էր. «Միջազգային վեճերի կարգավորման ժամանակ դատավորը կիրառում է հետևյալ կանոնները, որոնք պետք է հաշվի առնել հետևյալ հերթականությամբ՝

1. միջազգային պայմանագրային իրավունքը, ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ, որը սահմանում է պետությունների կողմից հստակորեն ճանաչված կանոններ,

2. միջազգային սովորույթը, որը սահմանում է ազգերի միջև առկա համընդհանուր պրակտիկան՝ սրանց կողմից ճանաչված որպես իրավական նորմ,

3. միջազգային իրավունքի նորմերը՝ ճանաչված քաղաքակիրթ ազգերի գիտակցությամբ,

4. *միջազգային դատական պրակտիկան՝ որպես միջազգային իրավունքի կիրառման և զարգացման միջոց* (ընդգծումը մերն է՝ չ.Յ.)»²⁸:

Նմանատիպ առաջարկություն է եղել նաև ստատուտը մշակող հանձնաժողովի անդամ Բուրի կողմից. «Դատարանը միջազգային վեճերի լուծման ժամանակ իր իրավասության շրջանակներում, ինչպես շարադրված է վերը, կիրառում է հետևյալ կանոնները ստորև ներկայացված հերթականությամբ՝

²⁶ See Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) (1970). ICJ Reports. Separate Opinion of V-P Ammoun, էջ 78-81:

²⁷ See Gabčíkovo-Nagymaros Project (1997). ICJ Reports Opinion of V.-P. Weeramantry (Judgement 25 Sept):

²⁸ See PCIJ. Advisory Committee of Jurists, Procès-Verbaux of the Proceedings of the Committee. June 16-July 24 1920 with annexes (the Hague, 1920), էջ 306:

1. միջազգային պայմանագրային իրավունքը, ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ, որը սահմանում է վիճող պետությունների կողմից հատակորեն ճանաչված կանոններ,

2. միջազգային սովորույթը, որը սահմանում է ազգերի միջև առկա համընդհանուր պրակտիկան՝ սրանց կողմից ճանաչված որպես իրավական նորմ,

3. իրավունքի ընդհանուր սկզբունքները՝ ճանաչված քաղաքակիրթ ազգերի կողմից,

4. հեղինակավոր դատական որոշումները և հեղինակավոր գիտնականների կարծիքները որպես իրավունքի կիրառման և զարգացման միջոց»²⁹:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից միջազգային իրավունքի զարգացման առաքելությունը սերտորեն կապված է այդ դատարանի նախադեպերի հետ: ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախադեպերի վերաբերյալ առկա են մի քանի կարևորագույն հարցադրումներ: Օրինակ՝ թե ինչպիսի կարգավիճակ ունեն դատարանի նախադեպային որոշումները, կամ, թե արդյոք ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախադեպային որոշումների գոյությունը խոսում է այն մասին, որ այդ դատարանը ստեղծում է, կամ կարող է ստեղծել իրավունքի նորմեր:

Պրոֆ. Շափիրոյի կարծիքով միջազգային դատարանների անընդհատ զարգացող որոշում կայացնելու գործընթացը միտված է ստեղծելու նախադեպերի համակարգ, անկախ նրանից, այն ճանաչված է, թե՞ ոչ: «Նույնիսկ մայրցամաքային իրավական համակարգում, որտեղ չկա նախադեպային իրավունք, ևս անհրապուրիչ է երկու նմանատիպ գործերում տարբեր նորմերի կիրառությունը: Նախկին որոշումներին հետևելու ճնշումը չափազանց մեծ է: Դատավորները, միտված են հետևել նախկին որոշումներին և իրենց որոշումները հիմնավորել որպես գոյություն ունեցող իրավունքի ակնհայտ դեդուկտիվ ընդարձակում»³⁰: Նախադեպերին հետևելը մեծացնում է որոշ-

²⁹ Տես նույն տեղը, էջ 344:

³⁰ St. u Martin Shapiro, *Toward a Theory of Stare decisis*, 1 J. Leg. Stud., Berkeley (1972), էջ 125; Alec Stone Sweet, *Judicial Authority and Market Integration in Europe, Institutions and Public Law: Comparative Approaches* 93, 99 (Tom Ginsburg and Robert Kagan, eds., 2005). Vaughan Lowe, *The Politics of Lawmaking: Are the Method and Character of Norm Creation Changing? The Role of Law in International Politics: Essays in International Relations and International Law* 207 (Michael Byers, ed., 2000), էջ 214-15:

ման կանխատեսելիությունը իրավաբանների և դատավարության կողմերի համար, որոնք պետք է վիճարկեն դատարանի առաջ, և որոնք պետք է հետևեն նախադեպային իրավունքում առկա օրինակներին՝ իրենց դատավարական ռազմավարությունը կառուցելու համար:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախադեպերի ուսումնասիրման ժամանակ հարկ ենք համարում նախ անդրադառնալ «*stare decisis*» սկզբունքին, որը գործում է իրավունքի ընդհանուր համակարգի երկրներում: Այս սկզբունքը ենթադրում է, որ նմանատիպ գործերը պետք է այնպես լուծվեն, որ տրվեն նմանատիպ և կանխատեսելի լուծումներ, իսկ նախադեպի սկզբունքն այն մեխանիզմն է, որով պետք է հասնել այդ նպատակին: Բլեքի իրավաբանական բառարանում³¹ նախադեպը բնորոշվում է որպես «դատարանի կողմից ստեղծված իրավունքի այնպիսի կանոն, որը ստեղծվել է առաջին անգամ որոշակի գործի համար, և որին պետք է այսուհետ հղում արվի նմանատիպ գործերը քննելիս»: Իրավունքի ընդհանուր համակարգում նախադեպային իրավունքը համարվում է իրավունքի աղբյուր: Այսպիսով՝ փորձենք պարզել, թե արդյոք ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումներն ունեն նախադեպային բնույթ «*stare decisis*» իմաստով:

«*Stare decisis*» սկզբունքը ենթադրում է, որ դատավորները պարտավոր են հետևել նախկին որոշումներով ստեղծված նախադեպերին: Այս արտահայտությունն առաջացել է լատիներենի «*stare decisis et non quieta movere*» արտահայտությունից, որը թարգմանաբար նշանակում է. «Կանգնել որոշումների կողքին և չխաթարել անխաթարելին»: Իրավաբանությունում այս սկզբունքը մեկնաբանվում է, որ դատարանները պետք է ենթարկվեն նախադեպին և չխաթարեն լուծված գործերը: «*Stare decisis*»-ը պարտադիր նախադեպի սկզբունքն է, որը ենթադրում է, որ այդ դատարանը և ստորադաս մյուս դատարանները պետք է հետևեն այդ դատարանի կայացրած որոշմանը: Տեսության մեջ քննարկվում է նաև այսպես կոչված «համոզիչ նախադեպը», որը ենթադրում է, որ դատարանը չպետք է հրաժարվի նախկինում իր կայացրած որոշումից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը դրա համար հիմնավոր պատճառներ ունի: Այս երկրորդ տեսակի նախադեպը ունի համոզիչ բնույթ:

³¹ Stare u Black's Law Dictionary 9th ed. (West Group, 2009), էջ 1600:

«Stare decisis»-ը այն տարբերակիչ նշաններից է, որով իրավունքի ընդհանուր համակարգի երկրները տարբերվում են այլ իրավական համակարգերից, քանի որ այդ երկրներում դատավորները կաշկանդված են պարտադիր նախադեպով, իսկ մայրցամաքային իրավական համակարգի երկրներում դատավորները հաշվի են առնում դատական պրակտիկան և այն կիրառում միանման, սակայն պարտավորված չեն հետևել դրան, այսինքն՝ այլ դատավորների որոշումները կարող են համոզիչ, բայց ոչ կաշկանդող բնույթ ունենալ: Անգլիական իրավական համակարգում անհրաժեշտաբար պարտավոր չեն իրավունքի զարգացման ու մեկնաբանման վերաբերյալ որոշումներ կայացնել: Նրանք կարող են պարզապես կաշկանդված լինել նախկին գործով կայացրած գործով: Նախադեպի պարտադիր բնույթը պայմանավորված է երկու գործոնով՝

1. Նախադեպային գործով որոշում կայացրած դատարանի դիրքը հիերարխիայում այն դատարանի համեմատ, որը քննում է ներկա գործը:

2. Արդյոք ներկա գործի փաստերը տեղավորվում են նախկին գործով կիրառված իրավական սկզբունքի շրջանակներում:

Կիճարկելի չէ այն փաստը, որ «stare decisis»-ը չի կիրառվում ՄՄԿ-ի միջազգային դատարանի նկատմամբ³²:

Միջազգային իրավունքի հայ տեսաբան Ե. Կիրակոսյանը ևս այն կարծիքին է, որ «stare decisis» կանոնը միջազգային իրավունքում չի գործում, սակայն, ըստ նրա, միջազգային դատական աստիճանները հետևում են սեփական որոշումներին. «Ավելին՝ շատ դատական աստիճաններ, հիմնականում ad hoc տրիբունալները, իրենց որոշումներում հաճախ հիմնվում են ՄՄԿ-ի միջազգային դատարանի դիրքորոշումների վրա»³³: Նմանատիպ կարծիք է հայտնել նաև միջազգային իրավունքի տեսաբան Ա. Սմբատյանը. «Միջազգային վեճերի լուծման ժամանակակից պրակտիկան վկայում է դատավորների կողմից «այլոց» նախադեպերի աստիճանաբար ընդարձակվող կիրառման մասին: Միջազգային արդարադատության մարմինների որոշումներն այժմ, որպես կանոն, պարունակում են հղումներ դատական որոշումներին, այդ թվում նաև՝ միջազգային արդարադատության այլ մարմինների

³² St. 'u Maarten Bos, «The interpretation of international judicial decisions», Revista Espanola de Derecho Internacional, 33 (1981), էջ 46:

³³ St. 'u Կիրակոսյանի Ե., նշված աշխատությունը, էջ 183:

որոշումներին... Ընդ որում՝ միջազգային դատավորները չունեն որևէ ձևական պարտավորություն՝ հետևելու այլ դատարանների որոշումներին, քանի որ միջազգային իրավունքի համակարգում նախադեպերը չունեն «stare decisis» բնույթ»³⁴:

Կան մի շարք պատճառներ, որոնք հիմնավորում են, թե ինչու «stare decisis»-ը չպետք է գործի այդ դատարանի պարագայում:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատավոր պրոֆ. Շահաբուդե-նը նշել է. «Ինչպիսին էլ, որ եղած լիներ «Status of Eastern Carelia»³⁵ գործում սահմանված իրավական կանոնը, իրավաբանական գրականությունից բխում է, որ այդ որոշման մեջ ձևակերպված իրավական կանոնից կարելի էր հետագայում շեղվել, քանի որ «stare decisis»-ի կանոնը ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների նկատմամբ չի կիրառվում»³⁶:

Հաագայի միջազգային իրավունքի ակադեմիայի դոկտոր պրոֆեսոր Աբու Էլվաֆան ևս այն կարծիքին է, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի դեպքում պարտադիր նախադեպի ինստիտուտը չի գործում. «Դատական որոշումները կարող են կիրառվել որպես միջազգային իրավունքի օժանդակ աղբյուր՝ չնայած այն պնդմանը, որի համաձայն դատարանի որոշումը պարտադիր է միայն կողմերի համար և միայն տվյալ գործով՝ «res judicata» սկզբունքը: Այլ կերպ ասած՝ չնայած նախադեպերի «stare decisis» կանոնը չի գործում միջազգային իրավունքի համակարգում, այնուամենայնիվ միջազգային դատարաններն ու տրիբունալները, որպես կանոն, հաշվի են առնում նախնական դատական որոշումները, երբ որոշում են կայացնում հաջորդող նմանատիպ վեճի վերաբերյալ: Մյուս կողմից՝ եթե փոխվում են միջազգային իրավունքի կանոնները, ապա «stare decisis» կանոնը չի կիրառվում և կիրառվում է միջազգային իրավունքի նոր կանոնը: Որոշ դեպքերում դատական որոշումները կարող են նաև չընդունվել որպես միջազգային իրավունքի օժանդակ աղբյուր: Այսպես՝ Ազգերի լիգայի Միջազգային արդարադատության մշտական պալատի որո-

³⁴ St´u **Смбатян А. С.**, Решения органов международного правосудия в системе международного публичного права, Москва 2012,- էջ 7-8:

³⁵ St´u Status of Eastern Carelia, Advisory Opinion, 1923 P.C.I.J. http://www.worldcourts.com/pcij/eng/decisions/1923.07.23_eastern_carelia.htm կայքում:

³⁶ St´u Precedent in the World Court, Hersch Lauterpacht Memorial Lectures, Mohamed Shahabuddeen, Cambridge University Press, New York 1996, էջ 97:

շումը՝ Լոտուսի գործի վերաբերյալ, ընդունվեց միջազգային իրավունքի հանձնաժողովի և 1958 թթ. Ժնևի կոնվենցիայի, ինչպես նաև 1982 թ. Փոլային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմից այն մասով, որը վերաբերում է բաց ծովերում բախման դեպքում նավի վրա տարածվող իրավունքին»³⁷:

Դատավոր Բեդը «Anglo-Iranian Oil» գործում նշում է. «Դատարանի ստատուտի 38-րդ հոդվածը պարտադիր է և ոչ հայեցողական: Այն պահանջում է դատարանից կիրառել դատական որոշումները որպես իրավունքի կանոնները սահմանելու համար օժանդակ միջոցներ: «Դատական որոշումներ» արտահայտությունը, բնականաբար, ներառում է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի և դրա իրավանախորդի որոշումները: Չենք կասկածում, որ դա ենթադրում է նաև դատարանի որոշումներում օգտագործվող հիմնական սկզբունքների կիրառումը, սակայն հավասարապես պարզ է, որ այդ դրույթը չի կարող մեկնաբանվել, որպես դատարանից պահանջող կիրառել այդ որոշումն ամբողջությամբ»³⁸:

Ճիշտ է՝ դատավոր Բեդը մի քանի գործերում արել է «նախկին որոշումներով փաստացիորեն կաշկանդված լինելով» արտահայտությունը, Ֆիցմորիսը նշում է, որ դատավոր Բեդը, այնուամենայնիվ, մտադրված չէր այնքան հեռուն գնալ և պնդել, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը պարտավոր է իրեն ներկայացված գործը լուծել ցանկացած այնպիսի նախադեպին համապատասխան, որն իր փաստական հիմքերով չի տարբերվում այդ գործից³⁹:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատավոր Բեդը նշում էր, որ 38-րդ հոդվածի 1-ին մասի «ոչ» կետը պարտադիր է իր այն պահանջում, որ Դատարանը պետք է կիրառի դատական որոշումներ, ներառյալ նաև իր որոշումները, բայց այդ պահանջում ոչինչ նշված չէ այն մասին, որ դատական որոշումները պետք է կիրառվեն պարտադիր նախադեպի ուժով: Մեկ այլ գործում նա հստակեցնում է, որ իր կարծիքով Միջազգային ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները պարտադիր չէին այն իմաստով, ինչը կիրառվում է իրավունքի ընդհանուր համակարգի երկրներում⁴⁰: «Factory at Chorzow (Claim for

³⁷ St. 'u Public international law by Dr. Ahmed Abou-El-Wafa, Cairo, 2002, էջ 222:

³⁸ St. 'u Anglo-Iranian Oil Co., ICJ Rep 1952, էջ 143:

³⁹ St. 'u G. Fitzmaurice, «Law and Procedure of the International Court of Justice, 1951-1954: Treaty Interpretation and Other Treaty Points», 34 BYIL 1957, էջ 583:

⁴⁰ St. 'u Peace Treaties, ICJ Rep 1950, էջ 233:

Indemnity)» գործով Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշման մեջ նշվում է. «Գրավոր փաստարկներում կամ բանավոր փաստարկման ժամանակ որևէ հիմք չի ներկայացվել, որով սկզբունքորեն կհաստատվեր որևէ տարբերություն երկու գործերի միջև, կամ որը կարդարացներ մի գործում ընդունված սկզբունքների կիրառության մերժումը մյուս գործում⁴¹»:

Այսպիսով՝ դատավոր Րեդը պատրաստ էր հրաժարվել կիրառել նախադեպը ոչ միայն, եթե այն կարելի էր տարբերակել, այլ նաև, եթե կար որևէ պատճառ, որը «կարդարացներ մեկ այլ գործով ընդունված սկզբունքների կիրառման մերժումն այդ գործում»: Այլ կերպ ասած՝ սա չէր բացառում, որ կարելի էր ստուգել նախկին գործով կիրառված սկզբունքների ճշտությունը, իսկ այդ իրավունքի գոյությունը նշանակում է, որ «stare decisis»-ը չի կիրառվում ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների դեպքում:

Մասնագետները միակարծիք են այն հարցում, որ «stare decisis»-ը ՄԱԿ-ի միջազգային դատարանի դեպքում չի կիրառվում, բայց չկա համաձայնություն այն հարցում, թե արդյոք «stare decisis» սկզբունքի կիրառման բացառումը պայմանավորված է ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտի 59-րդ հոդվածով: Կարծիք է արտահայտվել այն մասին, որ ընդունելով, որ ստատուտի 59-րդ հոդվածը չի խոչընդոտում այդ դատարանի որոշումների նախադեպային բնույթը, այնուամենայնիվ այդ հոդվածը թույլ չի տալիս դատարանի որոշումներին ձեռք բերել կաշկանդող բնույթի նախադեպի նշանակություն: Եթե ընդունենք այդ փաստարկը, ուրեմն կնշանակի, որ իրավաբանների խորհրդատվական խումբը նախագծում ի սկզբանե մտցրել է պարտադիր նախադեպի ինստիտուտը, որը հետագայում հանվել է, երբ Ազգերի լիգայի Խորհուրդն ու Ասամբլեան նախագծում ավելացրեցին 57 bis հոդվածը (այժմ՝ հոդված 59), ինչպես նաև «57 bis հոդվածի դրույթներին համապատասխան» արտահայտությունը, որը ավելացվեց ստատուտի 38-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում:

Պրոֆ. Շահաբուդդինը նշում է. «Ստատուտի 59-րդ հոդվածը որևէ կերպ կապ չունի ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների նախադեպային բնույթի հետ, այն որևէ ձևով չի ազդում այն հարցի վրա, թե արդյոք այդ դատարանի որոշումները ձեռք են բերում պարտադիր ուժ ունեցող նախադեպի բնույթ: Այս հոդվածը չի ստեղծվել բնորոշե-

⁴¹ St. 'u Peace Treaties, ICJ Rep 1950, հատուկ կարծիք, էջ 244:

լու դատարանի որոշումների՝ որպես պարտադիր կամ ոչ պարտադիր բնույթի նախադեպեր լինելը»⁴²: Ըստ նրա՝ ստատուտի 59-րդ հոդվածը ընդգծում է դատարանի որոշումների պարտադիր բնույթը վեճի կողմերի համար, այլ կերպ ասած՝ վեճի կողմերը, այդ վեճը ներկայացնելով ՄԱԿ-ի միջազգային դատարան, պարտավորված են հետևել Դատարանի կողմից այդ վեճի լուծման արդյունքում կայացրած որոշմանը: Այսինքն՝ խոսքն այստեղ գնում է դատավարական պարտադիրության մասին: Դատարանի որոշումը պարտադիր է միայն այդ վեճի կողմերի համար այն իմաստով, որ այն տալիս է կողմերի միջև որոշակի վեճի կապակցությամբ առաջացած հարաբերությունների իրավական իշխանագոր ձևակերպումը՝ կիրառելով իրավունքը կոնկրետ գործի փաստերի նկատմամբ, իսկ ընդհանուր միջազգային իրավունքը, որի վրա տարածվում է կոնկրետ գործի նախադեպային բնույթը, տարածվում է բոլոր պետությունների վրա, բայց այդ որոշումն ինքն իրենով բոլոր պետություններին չի պարտադրում կոնկրետ գործով արված իրավահարաբերությունների իրավական ձևակերպումը⁴³: Ստատուտի 59-րդ հոդվածի ձևակերպումը որևէ կերպ չի բացառում, որ տվյալ որոշման մեջ արտահայտված դիրքորոշումները կարող են կիրառվել նաև այլ որոշումներում և ձեռք բերել նախադեպային բնույթ, այլ է հարցը, թե այդ նախադեպն ինչպիսի կարգավիճակ ունի՝ «stare decisis», թե՛ համոզիչ բնույթ:

Դատավոր Գագենհայնը ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումներից մեկում նշել է. «Դատական որոշման շրջանակը անցնում է սահմանը, որը նշված է ստատուտի 59-րդ հոդվածում»⁴⁴: Դատավոր Ջեսսեին էլ իր հերթին նշում է, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ազդեցությունն ավելի լայն է, քան պարզապես դրանց կաշկանդող բնույթը⁴⁵:

Չպետք է մոռանալ, որ դատարանի ստատուտի 38-րդ հոդվածի

⁴² St' u Precedent in the World Court, Hersch Lauterpacht Memorial Lectures, Mohamed Shahabuddeen, Cambridge University Press, New York 1996, էջ 100:

⁴³ St' u նույն տեղը:

⁴⁴ St' u Nottebohm, ICJ Rep 1955, հատուկ կարծիք, էջ 61:

⁴⁵ St' u Barcelona Traction, Light and Power Company, Limited, ICJ Rep 1970, para. 9, 106, էջ 163, 220, separate opinion of Judge Nagendra Singh in Aegean Sea Continental Shelf, ICJ Rep 1978, էջ 46-47. ICJ Pleadings, Delimitation of the Maritime Boundary in the Gulf of Maine Area, IV, para. 234, էջ 100. Counter-Memorial of the United States. Continental Shelf (Libyan Arab Jamahiriya/Malta), ICJ Rep 1984, էջ 157-158, Judge Jennings, հատուկ կարծիք:

1-ին մասի «դ» կետի «դատական որոշումները» վերաբերում են նաև այլ միջազգային տրիբունալներին: Միաժամանակ պարզ է, որ նույն հոդվածում՝ 59-րդ հոդվածին արված հղումը վերաբերում է միայն ՄԱԿ-ի միջազգային դատարանին: Եթե ենթադրենք, որ այս դրույթում արված հղումը նպատակ է հետապնդում կանխել դատարանի որոշումները և ձեռք բերել կաշկանդող նախադեպի բնույթ, ստացվում է, որ այլ միջազգային դատարանների որոշումները ավելի գերակա դիրք ունեն, քանի որ դրանք չեն ընկնում ստատուտի 59-րդ հոդվածի կարգավորման ներքո: Այսինքն՝ հետևանքը այնքան անմիտ է, որ պարզ է, որ այդ մեկնաբանությունը չի կարող ճիշտ լինել⁴⁶:

1926 թ. պարզ դարձնելով, որ 59-րդ հոդվածը չի բացառում «հռչակագրային բնույթի որոշումները», Միջազգային արդարադատության մշտական պալատը ավելացրեց, որ «տվյալ հոդվածի նպատակն է պարզապես կանխել, որ որոշակի գործով դատարանի կողմից ընդունված սկզբունքները պարտադիր չդառնան այլ պետությունների համար կամ այլ գործերով⁴⁷:

Բառացիորեն մեկնաբանած՝ թվում է, թե սա բացառում էր պարտադիր նախադեպի կիրառությունը: Այս միտքն արտահայտվել է նաև այլ գործերում⁴⁸:

1984 թ. դատավոր Ջենինգսը հետևյալ կերպ ձևակերպեց. «Դատարանը սկսում է ստատուտի 59-րդ հոդվածի իր քննարկումը Միջազգային արդարադատության մշտական պալատի այն վերապահմամբ⁴⁹, որ 59-րդ հոդվածի նպատակն է, պարզապես կանխել, որ որոշակի գործով դատարանի կողմից ընդունված սկզբունքները պարտադիր չդառնան մյուս պետությունների համար և այլ գործերով: Մառչ ավելին է, քան ասել, որ դատարանի որոշումները պարտադիր չեն այն իմաստով, որ նրանք կլինեին իրավունքի ընդհանուր համակարգի ինչ-որ երկրում պարտադիր նախադեպերի համակարգի միջոցով: Սակայն դատարանի պրակտիկան նույնիսկ անգամ փոքր-ինչ ու-

⁴⁶ St. 'u Edvard Hambro, «The reasons behind the Decisions of the International Court of Justice», Current Legal Problems, 7 Oxford (1954), էջ 218

⁴⁷ St. 'u Certain German Interests in polish Upper Silesia, merits, 1926, PCIJ, Series A, No. 7, էջ 19:

⁴⁸ St. 'u Interpretation of Judgments Nos. 7 and 8 (Factory at Chorzow), 1927, PCIJ, Series A, No. 13, էջ 20-21.; and the Continental; Shelf (Libyan Arab Jamahiria/ Malta), ICJ Rep 1984, էջ 26:

⁴⁹ St. 'u Series A, No. 13, էջ 21:

սումնասիրելը ցույց է տալիս, որ ստատուտի 59-րդ հոդվածը ոչ մի դեպքում չի բացառում համոզիչ նախադեպի կիրառությունը: Հռոմի 59-ը վերաբերում է միայն որոշման դիսպոզիցիային, և դա ճիշտ է, քանի որ որոշակի գործով առաջացած իրավունքները ու պարտականությունները պարտադիր են միայն այդ գործի կողմերի համար և միայն տվյալ գործով, և այդ առումով Իտալիան, բնականաբար, պաշտպանված կլինի: Մա կարևոր պաշտպանություն է, և սխալ կլինե՞ր այլ տարբերակ առաջարկել»⁵⁰:

Միջազգային իրավունքի կանաճը տեսաբան Քալամբարյանը նշում է, որ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի «համոզիչ նախադեպի» գործոնը մեծ դեր է խաղացել միջազգային իրավունքի զարգացման գործում: Բացահայտ է այդ դատարանի դերակատարությունը միջազգային իրավունքի մի շարք ճյուղերի զարգացման գործում⁵¹: Այսպես միջազգային դատարանի 1949 թ. կայացրած որոշումը ՄԱԿ-ում ծառայության ընթացքում կրած վնասների փոխհատուցման վերաբերյալ նպաստել է միջազգային կազմակերպությունների միջազգային իրավասուբյեկտության ինստիտուտի զարգացմանը. այդ որոշմամբ սահմանվեց, որ ՄԱԿ-ը միջազգային իրավունքի սուբյեկտ է, ունի միջազգային իրավունքներ և կրում է միջազգային պարտականություններ և, հետևաբար, միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների՝ պետությունների նման կարող է ապահովել իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը՝ միջազգային դատարան դիմելու ճանապարհով: 1951 թ. Յեդասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի վերապահումների վերաբերյալ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումը էական ներդրում ունեցավ միջազգային պայմանագրային իրավունքում կանխորոշելով վերապահումների ինստիտուտի հետագա ձևակերպումը Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայում՝ ամրագրում ստանալով այդ կոնվենցիայի 19-21-րդ հոդվածներում: Դատարանը իր որոշման մեջ նշեց, որ վերապահում կատարած պետությունը կարող է դառնալ կոնվենցիայի մասնակից այն պետությունների նկատմամբ, ովքեր չեն առարկել այդ վերապահման

⁵⁰ St' u Continental Shelf (Libian Arab Jamahiria/Malta), ICJ Rep 1984, para. 27, էջ 157:

⁵¹ St' u Место доктрин наиболее квалифицированных специалистов по публичному праву различных наций в исторической базе современной международной права, **Каламбарян Р. А.**, Журнал Российской академии наук, «Государство и право», Москва, апрель 2006, էջ 75:

դեմ: Դատարանն իր որոշման մեջ ձևակերպեց վերապահումների՝ պայմանագրի առարկայի և նպատակի հետ համատեղելիության հայեցակարգը, որն էլ իր հերթին նպաստեց միջազգային պայմանագրերի ունիվերսալացմանը և դրանով իսկ նաև միջազգային իրավակարգի ամրապնդմանը⁵²:

Որոշ գիտնականներ ևս կարևորում է ՄԱԿ-ի միջազգային դատարանների որոշումների դերակատարությունը միջազգային իրավունքի զարգացման գործում՝ որպես օրինակ բերելով միջազգային հումանիտար իրավունքը⁵³:

Այսպիսով կարելի է պնդել, որ միակարծիքություն կա այն հարցում, որ միջազգային դատարանները ի դեմս ՄԱԿ-ի միջազգային դատարանի, իրենց գործունեության արդյունքում դարձել են միջազգային իրավունքի զարգացման հզոր գործիք: ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից միջազգային իրավունքի զարգացմանը նպաստում է այդ դատարանի նախադեպային իրավունքը, որը չպետք է նմանեցնել իրավունքի ընդհանուր համակարգում գործող պարտադիր նախադեպին («stare decisis»): Ընդհանուր իրավունքի համակարգի տեսաբանները ՄԱԿ-ի միջազգային դատարանի համար սահմանել են «համոզիչ նախադեպի» հայեցակարգը, որն իրականում նույնն է, ինչ մայրցամաքային իրավունքում կիրառվող «կայուն դատական պրակտիկայի» ինստիտուտը:

Եթե միջազգային իրավաստեղծման գործընթացը դիտարկենք լայն իմաստով, ապա ՄԱԿ-ի միջազգային դատարանը ուղղակիորեն մասնակցում է այդ գործընթացին՝ մեկնաբանելով, կոնկրետացնելով, զարգացնելով միջազգային իրավունքը և նպաստելով դրա կողիֆիկացմանը⁵⁴:

⁵² Sté u Место доктрин наиболее квалифицированных специалистов по публичному праву различных наций в источниковой базе современного международного права, **Каламкарян Р. А.**, Журнал Российской академии наук, «Государство и право», Москва, апрель 2006, էջ 76:

⁵³ Sté u **Կիրակոսյան Ե.**, նշված աշխատության, էջ 190:

⁵⁴ Ըստ Ե. Կիրակոսյանի՝ միջազգային իրավունքի սովորության նորմերի մեկնաբանման, կոնկրետացման և միատեսակ կիրառության ապահովման գործում կարևոր դերակատարություն ունեն նաև միջազգային այլ դատական մարմիններ, ինչպես օրինակ Նյուրենբերգյան տրիբունալը և այլն: Պարզապես դրանց ավանձնահատկությունն այն է, որ դրանք հիմնականում կիրառում են միջազգային քրեական իրավունքի նորմերը և հետևաբար առավելապես նպաստում են միջազգային քրեական իրավունքի զարգացմանը (տես Ե. Կիրակոսյանի նշված աշխատության էջ 192):

Грачик Ярмалоян

Соискатель кафедры европейского и международного права ЕГУ

РАЗВИТИЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА И ПРЕЦЕДЕНТ В МЕЖДУНАРОДНОМ СУДЕ ООН

В статье анализируется прецедентное право Международного суда ООН и развитие международного права этим судом. В современной науке международного права статус прецедентного права международного суда ООН стал объектом активных дискуссий, где главная тема вопрос о том является ли прецедентное право этого суда формальным источником международного права или нет.

Анализ этого вопроса поможет понять роль Международного суда ООН в современном международном праве.

В статье автор анализирует Статут и практику Международного суда ООН, чтобы понять применяется ли принцип «stare decisis» к решениям этого суда или нет. Автор делает вывод, что принцип «stare decisis» не применяется к решениям суда, но одновременно анализ практики этого суда показывает, что суд, как правило, следует своим прежним решениям, в результате чего суд создал устойчивую и предсказуемую практику.

Автор так же изучил развитие международного права Международным судом ООН, которое тесно связано с прецедентным правом этого суда. Международный суд ООН стал инструментом развития международного права и таким образом принимает участие в процессе международного правотворчества в широком смысле.

Hrachik Yarmaloyan

Post graduate researcher of the YSU Chair of European and International Law

DEVELOPMENT OF INTERNATIONAL LAW AND THE PRECEDENT IN UN INTERNATIONAL COURT OF JUSTICE

The article refers to the precedential law of UN International Court of Justice and the development of international law by that court. In modern science of international law the status of precedential law of International Court of Justice has become an object of active discussions where the main

topic is, whether the precedential law of the court in question is formal source of international law or not.

The analysis of this question will help to understand the role of International Court of Justice in modern international law.

The author has made analysis of the statute of International Court of Justice and the judicial practice of the court in order to understand whether the «stare decisis» principle applies to the decisions of UN International court of Justice or not. The author comes to the conclusion that the «stare decisis» principle does not apply to the decisions of the court but at the same time the analysis of the judicial practice of the court shows that the court as a rule follows its previous decisions as a result of which the court has formed sustainable and predictable judicial practice.

The author has studied also the development of international law by the International Court of Justice. This issue is closely related to the precedential law of the court. The International Court of Justice has become an instrument of development of international law and in this way participates in international law-making process in a wider sense.

Բանալի բառեր՝ ՄԱԿ-ի միջազգային դատարան, նախադեպ, միջազգային իրավունքի ձևական աղբյուր, դատական պրակտիկա, ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումներ, միջազգային իրավունքի զարգացում, միջազգային իրավաստեղծման գործընթաց, Միջազգային արդարադատության մշտական պալատ, «stare decisis» սկզբունք, ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրություն:

Ключевые слова: *Международный суд ООН, прецедент, формальный источник международного права, практика суда, решения Международного суда ООН, развитие международного права, процесс международного правотворчества, Постоянная палата международного правосудия, принцип «stare decisis», Статут Международного суда ООН.*

Key words: *UN International Court of Justice, precedent, formal source of international law, judicial practice, decisions of International Court of Justice, development of international law, international law-making process, Permanent Court of International Justice, «stare decisis» principle, statute of International Court of Justice.*